դեռ ևս մեր ազգի մէջ չէ տեսած նմանօրինակ հետազօտութիւն, Իրանական, Զենդեան, Պալհաւիկ, Սանսքրիտ, Բակտրիական, Ասորացի և Հրեայ տառից և բառից համեմատութեամբ լուծել է այն դարաւոր խնդիրն կամ կնճիռն, որ Գորդեան հանգուցի նման՝ միայն նորա բազմահմուտ տեղեկութեանց սրով յաջողեցաւ լուծել, մեր բազմապատիկ հնութեանց նման խնդրոց ուսումնական և ի գրական ուսմանց բղխեալ լոյս կընծեռէ, վասն որոյ քաջայայտ պիտի լինինք, որ մի միայն առաւել ճիշտ հետազօտութիւնք եւրոպացւոց կարեն համապատշաճ գին յատկացուցանել այն Մեսրոպեան երկասիրութեանց, որք ազգապարծանք պսակօք փունջ կկազմեն ի գլուխ նորա, որպէս ազգային հռչակաւոր գիտնականի. այլ վասն այսքան մեծարեալ լուսաւորութեանց նորա՝ ունիմ ի մտի առանձին հատուածով երանել ի հանդէս, և նորա գեղեցիկ և ազգասիրական գիտելեօքն նուիրել ի սեղան ազգի՝ ոչ յետ բազմաց ինչ աւուրց։

ՍԵՐՈՎԲ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ.

# ԱԶԳԱՅԻՆ

## ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի 12-ն ամսոյս Վեհ. Հայրապետ ամենայն Հայոց գնաց Մայր Աթոռէս 16—18 վերստ չափ հեռի ի Նիւրական յօդափոխութիւն։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՑՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շ–ր––Ն–կ––րէ–ն)։

(ՅԱՐՄԱՒԻՐ - ՆՈՐ)

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Դաւիթ Գասպարեանց. . . . | 5 | |
| Յարութիւն Գասպարեանց. . . | 5 | |
| Աղէքսանդր Գասպարեանց. . . | 1 | |
| Սիմէօն Գասպարեանց. . . . | 5 | |
| Գասպար Գասպարեանց. . . | 2 | |
| Անտօն Գասպարեանց. . . . | 5 | |
| Յովսէփ Գասպարեանց. . . . | 1 | |
| Գրիգոր Գասպարեանց. . . . | 2 | |
| Յօհաննէս Գասպարեանց . . . | 2 | |
| Կարապետ Գասպարեանց. . . | 1 | |
| Խաչիկ Գասպարեանց. . . . | 2 | |
| Սարգիս Հալաճեանց. . . . | 5 | |
| Դօմինուկ Նազարեանց. . . . | 2 | |
| Սարգիս Շնանեանց. . . . | 2 | |
| Մելքոն Ղափլանեանց. . . . | 1 | |
| Աստուածատուր Պօպովեանց. . . | 5 | |
| Կարապետ Գասպարեանց. . . | 1 | |
| Գէորգ Եաղինեանց. . . . | 1 | |
| Յարութիւն Պարոնեանց. . . . | 1 | |
| Գրիգոր Գասպարեանց. . . . | 1 | |
| Ջաքար Այվազեանց. . . . | 2 | |
| Գաբրիէլ Կուսիկեանց. . . . | 1 | |
| Կիրակոս Կիրակոսեանց . . . | 1 | |
| Մարգար Պօպովեանց. . . . | 1 | |
| Յովակիմ Ասլանեանց. . . . | 1 | |
| Գէորգ Սաֆարեանց. . . . | 1 | |
| Յակոբ Շահնազարեանց. . . . | 1 | |
| Անտօն Պօպովեանց. . . . | 1 | |
| Մինաս Պետրոսեանց. . . . | 1 | |
| Նազար Գասպարեանց. . . . | 1 | |
| Խաչերես Հալաճեանց. . . . | | 55 |
| Գրիգոր Գաբրիէլեանց. . . . | 1 | |
| Սարգիս Այվազեանց. . . . | 1 | |
| Յովհաննէս Հալաճեանց . . . | 2 | |
| Առաքել Ասլանեանց. . . . | 1 | |
| Յովհաննէս Կուսիկեանց . . . | 1 | |
| Խաչատուր Սարգսեանց . . . | 1 | |

| | | |
|---|---|---|
| Բարսամին Հալաճեանց . . . | | 25 |
| Կարապետ Պարոնեանց . . . | | 20 |
| Բարսեղ Ղափլանեանց . . . | 1 | |
| Մկրտիչ Ղարապեանց . . . | | 40 |
| Խաչերէս Ասլանեանց . . . | 1 | |
| Բարսամին Այվազեանց . . . | | 30 |
| Յովակիմ Գասպարեանց. . . | 5 | |
| Յովհաննէս Սաֆարեանց. . . | | 30 |
| Բաղդասար Պօպովեանց . . . | 2 | |
| Յակոբ Գասպարեանց. . . | 1 | |
| Անտոն Պարոնեանց . . . | | 30 |
| Եսայի Այվազեանց. . . | 1 | |
| Սահակ Մովսէսեանց. . . | 1 | |
| Գասպար Խաչատրեանց , . . | 1 | |
| Մկրտիչ Բաղարոսեանց . . . | 5 | |
| Զաքար Պետրոսեանց. . . | 5 | |
| Մովսէս Մովսէսեանց. . . | | 25 |
| Պետրոս Սաֆարեանց. . . | 4 | |
| Յարութիւն Ջենթիմիրեանց. . | 1 | |
| Մովսէս Թորոսեանց. . . | 2 | |
| Խաչատուր Պարոնեանց. . . | 1 | |
| Դաւիթ Պարոնեանց. . . | 1 | |
| Գասպար Օգսէնտեանց . . . | | 8 |
| Ազարիա Այվազեանց. . . | | 20 |
| Բաղտասար Այտինեանց . . | | 30 |
| Անտոն Գասպարեանց. . . | | 50 |
| Խաչատուր Սարգսեանց . . . | 1 | |
| Բաղդասար Այվազեանց . . . | 2 | |
| Օհաննէս Թորոսեանց. . . | 5 | |
| Յարութիւն Թորոսեանց . . . | 2 | |
| Խաչատուր Յովակիմեանց . . . | 5 | |
| Մկրտիչ Ալէքսանեանց. . . | 5 | |
| Գէորգ Յարութիւնեանց . . . | 5 | |
| Մկրտիչ Տէրտէրեանց . . . | 2 | |
| Բաղտասար Տէրտէրեանց , . . | 3 | |
| Մովսէս Տէրտէրեանց . . . | 1 | |
| Գէորգ Ասլանեանց . . . | 1 | |
| Գաբրիէլ Տէրտէրեանց . . . | 1 | |
| Յակոբ Յարութիւնեանց . . . | 2 | |
| Այրի կին Մարիամ Կուսիկուհի . . | | 20 |
| Յակոբ Նազարեանց . . . | 1 | |
| Միքայէլ Այվազեանց . . . | | 10 |
| Սանդխան Նախիջեւանցի Քարտաշեանց . | 1 | |
| Սաֆար Խաչատուրեանց . . . | | 18 |
| Սարգիս Մամջանեանց . . . | | 15 |
| Ղազար Բաղարոսեանց . . . | | 20 |
| Յօհաննէս Յօհաննէսեանց . , . | | 20 |
| Սարգիս ուզուն Յօհաննէսեանց . . | 4 | |
| Խաչատուր Տէրտէրեանց . . . | | 27 |
| Յարութիւն Ղափլանեանց . . . | | 15 |
| Յարութիւն Կուսիկեանց . . . | | 60 |
| Այրի Ռոպէկէ պարոնուհի . . . | | 15 |
| Ռափայէլ Ջանթէրեանց . . . | 3 | |

(Շարունակելի)

ՀԱՇԻՒ

Ժողովարարութեան ի նպաստ յերկրաշարժութենէ վը-նասեալ Աւագ Եկեղեցւոյ և Հայազգեաց Շամախւոյ.

"Արարատ„ ամսագրոյ ընթերցողաց յայտնի է եւ դեռ մտքերէն չէ ելած այն աղետալի երկրաշարժը՝ որ եղեւ ի սկզբան անցեալ 1872 ամի ի Շամախի, որով վնասեցաւ բաց ի զանազան շէնքերէ, տեղւոյն Աւագ Եկեղեցւոյ շէնքը եւ ազգայնոց մեծ մասն են-թարկեցան մեծամեծ եւ դառն վնասուց եւ մնացին առանց բնակութեան:

Վեհափառ Գէորգ Դ. կաթողիկոս ամենայն Հա-յոց, որ նմանօրինակ ցաւալի դէպքերու մէջ ինչպէս էին Կ. Պօլսոյ Բերայի մեծ հրդեհն եւ Պարսկաստանի մանաւանդ Ջուղայու համաճարակ սովը, ցոյց էր տը-ւեալ իւր մարդասիրական եւ որդեսիրական վեհանձն ոգին, այս անգամ եւս լսելով Շամախւոյ իւր սիրելի որդւոց խղճալի ձայնը, Հայրական գորովալիր սիրտը շարժեալ ի գութ, իսկոյն հրամայեց Ռուսաստանի մէջ եղեալ ազգային Հոգեւոր Տեսչութեանց միջոցօք հան-գանակութիւն բանալ եւ դրամ հաւաքել ի նպաստ վնասեալ Աւագ Եկեղեցւոյ եւ ազգայնոց:

Ցաւալի է որ ի Հոգեւոր Տեսչաց ոմանք, որոց կարգէն են Առաջնորդն Ղարաբաղու եւ Երեւանայ փոխանորդն Թեմակալի, չհամապատասխանեցին ըստ արժանւոյն Սրբազնագոյն Հայրապետի ակնկալութեան, որով ամբողջ 16 ամսոց մէջ այն է մինչ ցվերջն ան-ցեալ Մայիս ամսոյ, Մայր Աթոռոյ գանձարանն հազիւ